ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___ » _____ 2026թ. **N_____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՇԻՇԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ԽՃՈՒՂԻ Հ.2/10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ԱՍԼԵՆԴ» ՓԲԸ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՇԻՇԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ԽՃՈՒՂԻ Հ.2/10 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ՝ «Ասլենդ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Շիծեռնակաբերդի խճուղու հ.2/10 հասցեում /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ. 30032026-01-0453 վկայական/ և տարածագնահատման 5-րդ գոտում գտնվող 1201.0քմ մակերեսով հողամասը (01-006-0619-0052 կադաստրային ծածկագիր) Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Շիծեռնակաբերդի խճուղի հ.2/10 հասցեին կից և տարածագնահատման 5-րդ գոտում գտնվող 1047.3քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելուն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ԽՃՈՒՂԻ Հ.2/10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ԱՍԼԵՆԴ» ՓԲԸ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ԽՃՈՒՂԻ Հ.2/10 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով առաջարկվում է «Ասլենդ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/10 հասցեում և տարածագնահատման 5-րդ գոտում գտնվող 1201.0քմ մակերեսով հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ. 30032026-01-0453 վկայական/ փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/10 հասցեին կից գտնվող և տարածագնահատման 5-րդ գոտում գտնվող 1047.3քմ մակերեսով հողամասի հետ:

Հողամասի փոխանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Ասլենդ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 1201.0քմ մակերեսով հողամասը ներառված է ասֆալտապատ ճանապարհի մեջ, որը հանդիսանում է «Փյունիկ» Հայաստանի հաշմանդամություն ունեցող անձանց միություն» բարեգործական հասարակական կազմակերպության շենք-շինությունները սպասարկող ճանապարհը, որի պահպանումը պարտադիր պահանջ է:

Հաշվի առնելով նշվածը և այն հանգամանքը, որ ընկերության կողմից Հրազդանի կիրճ հ.4/9 /Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/9/ հասցեում իրականացվող կառուցապատման արդյունքում արտաքին չափերի և տեղադիրքի պատճառով հնարավոր չէր լինելու պահպանել քննարկվող ճանապարհը, առաջարկվել էր ճանապահի հատվածը առանձնացնել, /Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/10/ և իրականացնել հողամասերի փոխանակում հարակից հատվածում գտնվող հողամասից՝ այդպիսով պահպանելով հողամասերի արդյունավետությունը:

Մասնագիտական որակավորում ունեցող «ՖՈՒԼ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից իրականացնել է հողամասերի շուկայական արժեքի գնահատման աշխատանքներ և ըստ տրամադրված հաշվետվությունների՝ Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/10 հասցեում գտնվող «Ասլենդ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 1201.0քմ մակերեսով հողամասի շուկայական արժեքը 20.05.2026թ դրությամբ կազմել է 308 990 000 ՀՀ դրամ, իսկ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/10 հասցեին կից հատվածում գտնվող 1047.3քմ մակերեսով հողամասի շուկայական արժեքը 09.06.2026թ դրությամբ կազմել է 261 754 831 ՀՀ դրամ: Ընկերության կողմից ներկայացվել է տարբերություն կազմող մասի նկատմամբ Երևան համայնքին պահանջ չներկայացնելու վերաբերյալ դիմում:

Համաձայն հողային օրենսգրքի 71–րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի h.286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի փոխանակումը դրանց օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կատարվում է համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ մշակվել է ավագանու որոշման սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ